# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ 2018Թ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2018թ. ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարների որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Հաշվետու ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 650 որոշում, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալու և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Պատրաստվել է տասներկու քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը վերաբերվում էին անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված վեճերի, գույքին պատճառված վնասի, հարևանային իրավունքի, հարկերի, տեղական տուրքերի և վճարների, ինքնակամ շինարարության և աշխատանքային վեճերի հետ կապված խնդիրների: Դիմումներին պատասխանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից ելնելով: Տարվա ընթացքում տրվել են բազմաթիվ խորհրդատվություններ՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների:

Ամենամսյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

Բաժնի պետը, որպես աուդիտի կոմիտեի անդամ, մասնակցել է ներքին աուդիտի բաժնի կողմից մարզի հանրակրթական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և մարզպետարանի աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների քննարկմանը՝ աուդիտի կոմիտեի նիստերի ընթացքում, ներկայացրել համապատասխան դիրքորոշումներ և առաջարկություններ:

Բաժնի կողմից առաջարկություններ են ներկայացվել կառավարության մի շարք որոշումների, "Տարածքային կառավարման մասին" ՀՀ օրենքի, "Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ:

Մասնակցել ենք մարզի Վայք, Ջերմուկ և Զառիթափ համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողությանը:

Մարզի ավագանիների կողմից տարվա ընթացքում ընդունված որոշումները բաժնի կողմից տեղադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:

<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ի կողմից մարզպետարանի դեմ ներկայացված հայցի շրջանակներում մասնակցել ենք դատաքննություններին:

Պատասխանվել են տարբեր պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին, մասնավորապես համագործակցել ենք ՀՀ դատախազության և քննչական կոմիտեի հետ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ